LG
Life's Good

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ՍԱՌԵՑՄԱՆ ԽՑԻԿՈՎ ՍԱՌՆԱՐԱՆ

Սառնարանը միացնելուց առաջ, ուշադիր կարդացեք այս ուղեցույցը և մշտապես ունեցեք այն ձեռքի տակ:

GA**499****
GA**489****
GA**439****
GA**429****
GA**589****
GA**539****
GA**529****

AFN36881831

P/NO : MFL42818339, #0

www.lg.com

Գրանցում

Սառնարանի մոդելը և սերիական համարը նշված են ապրանքի արտաքին կողային հատվածում:  Յուրաքանչյուր սառնարանի համար այդ համարը անհատական է, այլ ապրանքների վրա այն չի կրկնվում: Լրացրեք ներքևի աղյուսակը և պահեք այս ուղեցույցը որպես ձեռքբերման վկայական:

Գնման ամսաթիվ : ____________________

Խանութի անվանումը : ____________________

Խանութի հասցեն : ____________________

Խանութի հեռախոսը : ____________________

Համար No. : ____________________

Սերիական համար : ____________________

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


## 4 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

4 Տեխնիկական բնութագրի աղյուսակ
6 Անվտանգության պահանջները
10 Սառնարանի հիմնական մասերը

## 11 ՏԵՂԱԴՐՈՒՄ

11 Կլիմատ համակարգ
11 Տեղադրում
11 Միացում

## 12 ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

12 Կառավարման վահանակ
16 - Ջերմաստիճանի կարգավորում
16 - «OPTI-TEMP ԳՈՏԻ» - օպտիմալ ջերմասիտճանի գոտի
17 - «ԱՐԱԳ-ՍԱՌԵՑ.» - արագ սառեցում
18 - «ԷԿՈ-ՌԵԺԻՄ» - էլեկտրոխնայման ռեժիմ
18 - Արգելափակում
19 - Ինքնազննում
19 - «ՁԱՅՆ.ԱԶԴԱՆՇ» - ոչ ամուր փակված դռան նախազգուշացնող ազդանշան
19 - Միացնել/Անջատել
19 - Սառեցման խցիկի լուսավորում
20 Սառեցման բաժին
20 Ինչպես հանել «OPTI-TEMP ԳՈՏԻ» շարժական արկղը
20 Ինչպես հանել շարժական արկղի կափույրը
21 Ինչպես հանել բանջարեղենի շարժական արկղը
21 Շշերի տակդիր
21 Շարժական ապակե դարակի հանում և տեղադրում
21 Ծալվող ապակե դարակ
22 Սառցախցիկի շարժական դարակների հանում և տեղադրում
23 Սառույցի պատրաստում

## 23 ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

23 Մթերքների պահպանում

## 24 ԽՆԱՄՔ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

24 Մաքրություն
24 Ընդհանուր տեղեկություններ
24 Սառնարանի աշխատանքային առանձնահատկությունները
25 Սառնարանի դռների վերատեղադրում

## 28 ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ և ՎԵՐԱՑՈՒՄ

28 Smart Diagnosis (շարժական տեղազննում )
29 Թերությունների որոնում և վերացում
30 Երաշխիքային պայմաններ

## 30 ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

30 Հին սառնարանի վերամշակում

# ՍԱՌՆԱՐԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

| Տեխնիկական բնութագիր / Մոդել | GA**489TG** | GA**489TASB GA**489TADN GA**489SADN GA**489S*KZ GA**489T*KZ | GA**589**KZ GA**499**KZ GA**489**KZ GA**489***P GA**489**CK GA**489**VM | GA**489T*QZ GA**489TGQZ GA**489S*QZ | GA**589**QZ GA**489**QZ | GA**589**CZ GA**489**CZ | GA**589**CA GA**489**CA | GA**589**QA GA**489**QA | GA**589**QL GA**489**QL | GA**589**CL GA**489**CL |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նոմինալ հզորությունը (Վ˜Հց) | 220Վ – 240Վ ˜ 50Հց | | | | | | | | | |
| Կլիմատ համակարգ | Տես` ում սառեցման խցիկի ներսում | | | | | | | | | |
| Սպառողական հզորությունը (Վտ): | | | | | | | | | | |
| - ապասառեցման դեպքում | 170 | | | | | | | | | |
| - ջեռուցման բաղադրիչի | 170 | | | | | | | | | |
| - լամպեր, առավելագույն հզորություն | - | | | | | | | | | |
| Ծավալը (լ), Նետտո/Բրուտտո | 335/394 | | | 360/394 | | | | | | |
| - սառցախցիկ (լ), Նետտո/Բրուտտո | 105/131 | | | | | | | | | |
| - թարմության բաժին (լ) | 17 | | | - | | | | | | |
| - սառեցման բաժին (լ), Նետտո/Բրուտտո | 213/263 | | | 255/263 | | | | | | |
| Սառնագենտ / կշիռը (գ) | R600a/62գ | | | | | | | | R600a/58գ | |
| Փրփրագենտ | Ցիկլոպենտան | | | | | | | | | |
| Մեծ չափեր: | | | | | | | | | | |
| - բարձրություն (մմ), առանց փաթեթի / փաթեթավորված | 2000/2095 | | | | | | | | | |
| - խորություն (մմ), առանց փաթեթի / փաթեթավորված | 668/745 | | 688/745 | 668/745 | 688/745 | | | | | |
| - լայնություն (մմ), առանց փաթեթի / փաթեթավորված | 595/655 | | | | | | | | | |
| - Քաշ (կգ), առանց փաթեթի / փաթեթավորված | 90/96 | 81/87 | | | | 79/85 | 84/90 | | 80/86 | 79/85 |
| Սառեցման խցիկի դասը | * *** | | | | | | | | | |
| Պաղեցման համակարգ | Total No Frost | | | | | | | | | |
| Էներգոսպառման դասակարգիչ [1] | A++ | | | | | | A | | A+ | |
| Ձայնային հզորության մակարդակ, дБА [2] | 40 | | | | | | 41 | | | |

[1] Չափման և հաշվարկի մեթոդ` համաձայն Առևտրի և Արդյունաբերության Նախարարության №357 հրամանի առ 29. 04. 2010.
[2] Չափման և հաշվարկի մեթոդ` համաձայն ՊԵՏՍՏԱՆԴԱՐՏ Ռ 51401-99

## ՆՇՈՒՄ

Արտադրող ընկերությունն իրեն է որոշ տեխնիկական բնութագրեր փոխելու իրավունքը` առանց լրացուցիչ ծանուցման:

# ՍԱՌՆԱՐԱՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ:

| Մոդել / Տեխնիկական բնութագիր | GA**539*V*P GA**439*V*P GA**539**QA GA**439**QA | GA**439TG** | GA**439TL** | GA**539**QZ GA**439**QZ GA**539*P*P GA**439*P*P | GA**539**CZ GA**439**CZ | GA**539**CA GA**439**CA | GA**529**QA GA**429**QA |
|---|---|---|---|---|---|---|---|
| Նոմինալ հզորությունը (Վ˜Հց) | 220Վ - 240Վ ~ 50Հց | | | | | | |
| Կլիմատ համակարգ | Տես՝ սառեցման խցիկի ներսի պիտակը | | | | | | |
| Սպառողական հզորությունը (Վտ): | | | | | | | |
| - ապասառեցման դեպքում | 170 | | | | | | |
| - ջեռուցման բաղադրիչի | 170 | | | | | | |
| - լամպեր, առավելագույն հզորություն | - | | | | | | |
| Ծավալը (լ), Նետտո/Բրուտտո | 334/368 | | | | | | 297/342 |
| -սառցախցիկ (լ), Նետտո/Բրուտտո | 105/131 | | | | | | 94/131 |
| - թարմության բաժին (լ) | - | | | | | | |
| - սառեցման բաժին (լ), Նետտո/Բրուտտո | 229/237 | | | | | | 203/211 |
| Սառնագենտ / կշիռը (գ) | R600a/62գ | | | | | | |
| Փրփրագենտ | Ցիկլոպենտան | | | | | | |
| Մեծ չափեր: | | | | | | | |
| - բարձրություն (մմ), առանց փաթեթի / փաթեթավորված | 1900/1995 | | | | | | 1800/1885 |
| - խորություն (մմ), առանց փաթեթի / փաթեթավորված | 688/745 | 668/745 | | 688/745 | | | |
| - լայնություն (մմ), առանց փաթեթի / փաթեթավորված | 595/655 | | | | | | |
| - Քաշ (կգ), առանց փաթեթի / փաթեթավորված | 80/86 | 89/95 | 84/90 | 85/91 | 83/89 | 78/84 | 76/82 |
| Սառեցման խցիկի դասը | * *** | | | | | | |
| Սառեցման համակարգ | Total No Frost | | | | | | |
| Էներգոսպառման դասակարգիչ [1] | A | | A++ | | | A | |
| Ձայնային հզորության մակարդակ, дБА [2] | 41 | | 40 | | | 41 | |

[1] Չափման և հաշվարկի մեթոդ՝ համաձայն Առևտրի և Արդյունաբերության Նախարարության №357 Հրահանգի , 29. 04. 2010.
[2] Չափման և հաշվարկի մեթոդ՝ համաձայն ՊԵՏՍՏԱՆԴԱՐՏ Ռ 51401-99

**! ՆՇՈՒՄ**

Արտադրող ընկերությունն իրեն է որոշ տեխնիկական բնութագրեր փոխելու իրավունքը՝ առանց լրացուցիչ ծանուցման:

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Անհրաժեշտ է հետևել անվտանգության կանոններին՝ սառնարանը սխալ օգտագործելու պարագայում նյութական կորուստներից, ինչպես նաև փասվածքներից խուսափելու համար: (Սույն ձեռնարկին ծանոթանալուց հետո, անհրաժեշտ է այն պահել անփաս և հասանելի վայրում): Մի մոռացեք փոխանցել այն սառնարանի հաջորդ սեփականատիրոջը:

**⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ !**

Այս նշանը ցույց է տալիս վտանգի , մահվան կամ փասվածքի առկայության մասին:

**⚠ ԶԳՈՒՇԱՑԵՔ !**

Այս նշանը ցույց է տալիս վտանգի, դժբախտ պատահարի կամ նյութական կորստի առկայության մասին:

Այս սարքավորման՝ պիտանելության ժամկետը կազմում է 7 տարի՝ սպառողին ապրանքի փոխանցման օրվանից սկսած: Արտադրողը պատասխանատվություն չի կրում սույն ուղեցույցով սահմանված շահագործման կանոնների խախտման դեպքում:

**⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ !**

- Շահագործումից առաջ անհրաժեշտ է կարգավորվել սառնարանը և այն գործարկել ըստ հրահանգներին
- Արգելվում է քանդել վերանորոգել կամ փոփոխություններ մտցնել սույն էլեկտրասարքավորման կառուցվածքի մեջ: Այն կարող է հանգեցնել հրդեհի՝ կամ աշխատանքային անսարքության՝ դառնալով դժբախտ պատահարի պատճառ:
- Հրդեհի առաջացման, հոսանքահարման կամ փասվածք ստանալու հավանականությունը նվազեցնելու համար, սույն ապրանքի շահագործման ժամանակ անհրաժեշտ է պահպանել անվտանգության հիմնական կանոնները:

### ԷԼԵԿՏՐՈՄՆՈՒՑՄԱՆ ԲԼՈԿԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

**Անհրաժեշտ է կիրառել առանձին վարդակ:**
Մի քանի սարքերի միացման համար մեկ վարդակից օգտվելը կարող է բռնկում առաջացնել:



**Եթե հոսանքի լարը կամ խրոցը փասվել է, կամ վարդակի բնիկների միացման խնդիր կա, ապա արգելվում դրանք օգտագործել:**
Այն կարող է հանգեցնել հոսանքահարման կամ կարճ միացման, որը կարող է հրդեհի պատճառ դառնալ:



**Թույլ մի տվեք, որ ջուր թափվի հոսանքի լարի խրոցի վրա:**
Խրոցի վրա ջրի առկայությունը կամ փասվելը կարող է հրդեհի կամ հոսանքահարման պատճառ դառնալ:



**Թույլ մի տվեք, որ հոսանքի լարը ծռվի և համոզվեք, որ նա սեղմված չէ որևէ ծանր առարկայով:**
Սեղմված լարը կարող է փասվել, որը կարող է հանգեցնել հրդեհի կամ հոսանքահարման:




**ՅԱրգելվում է փոխել ցանցային լարը կամ փոխել նրա երկարությունը: Այն կարող է փասվել և առաջացնել կարճ միացում և հրդեհ:**
Սնուցման լարի խափանման դեպքում, այն պետք է փոխվի միայն արտադրողի, սերվիս կենտրոնի կամ նմանատիպ մասնագիտացված անձնակազմի կողմից՝ վտանգից խուսափելու նպատակով:




**Պետք չէ ձգել հոսանքի լարը կամ խոնավ ձեռքերով հպվել խրոցին:**
Այն կարող է առաջացնել հոսանքահարում կամ փասվածք:



**Ամբողջությամբ չորացնել խրոցը, մաքրել փոշուց և զգույշ միացնել վարդակին:**
Փոշին, ջուրը կամ թույլ միացումը կարող ենէ հրդեհի կամ հոսանքահարման պատճառ դառնալ:



**Սառնարանը պետք է տեղադրված լինի գետնի վրա:**
Սառնարանի ոչ ամուր տեղադրումը գետնի վրա կարող է փասել կամ հոսանքահարում առաջացնել:



## ՍԱՌՆԱՐԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

**Սառնարանի վրա խՒորհուրդ չի տրվում դնել ծանր, վտանգավոր և այլ առարկաներ:**
Այդ առարկաները, դռների բացման կամ փակման ժամանակ կարող են ընկնել և վնաս հասցնել, հոսանքահարել կամ բռնկում առաջացնել:



**Մի բռնվեք դռներից, զամբուղից, արկղերից կամ դարակներից:**
Սառնարանը կարող է վայր ընկնել կամ վնասել ձեռքերը: Երեխաներին, հՀատկապես, մի թույլատրեք անել դա:



**Էլեկտրամասերի իզոլյացիոն ժապավենի վնասվելու դեպքում կարող է առաջանալ կարճ միացում կամ հոսանքահարում:**



**Սառնարանում կամ նրան հարակցող վայրում մի պահեք ջերմակայուն նյութեր, ինչպես օրինակ եթեր, բենզին, սպիրտ, հեղուկ նավթային գազ (պրոպան-բուտան), սփրեյներ կամ կոսմետիկա:**
Այն կարող է առաջացնել պայթյուն կամ հրդեհ:



**Խորհուրդ չի տրվում սառնարանում տաք ռոմ դնել տհաՃ հոտերը մեկուսացնելու համար: Խորհուրդ չի տրվում չորացնել սառնարանի ներսը մազերի տաքացուցիչով:**
Հակառակ դեպքում գոյություն ունի հոսանքահարվելու կամ հրդեհի առաջացման հավանականություն:



**Արգելվում է կենդանիներ դնել սառնարանի մեջ:**



**Եղեք ուշադիր սառնարանի դռները բացելու կամ փակելու ժամանակ, քանի-որ այդ ժամանակ կարելի է վնասել սառնարանի կողքը կանգնած այլ մարդկանց:**
Դռների բացման կամ փակման ժամանակ, կարելի է սեղմել ձեռքը կամ ոտքը, իսկ երեխան կարող է հարված ստանալ դռների անկյունային մասերի հետ բախումից:



**Խորհուրդ չի տրվում սառնարանում պահել գիտական նյութեր:**
Ջերմաստիճանի խիստ հետևողականություն պահանջող նյութերի պահպանումը սառնարանում բավականին ռիսկային է. դրանք կարող են փչանալ և առաջացնել անակնկալ քիմիական ռեակցիա



**Եթե սառնարանը ջրի տակ է անցել, ապա դրա հետագա կիրառումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե ստուգվել է սերվիս կենտրոնի ներկայացուցչի կողմից:**
Հակառակ դեպքում վտանգ կա հոսանքահարվելու կամ հրդեհի առաջացման:



**Գազի արտահոսքի ժամանակ չի թույլատրվում դիպչել սառնարանին կամ վարդակին: Անհրաժեշտ է անմիջապես թարմացնել տարածքը թթվածնով և դիմել սպասարկման կենտրոն:**
Եթե սառնարանի տեխափոխման, վերանորոգման կամ շահագործման ժամանակ, որոշակի վնասներ առաջացրել են գազի արտահոսք, ապա յուրաքանչյուր կայծ կարող է պայթյուն կամ հրդեհ առաջացնել:




**Չպետք է ցողել ջրով սառնարանի արտաքին և ներքին մասերը, արգելվում է այն մաքրել տարբեր հեղուկներով:**
Այն կարող է կարճ միացում կամ հոսանքահարում առաջացնել:



**Սառնարանի տեղափոխման ժամանակ օգտվեք բռնակներից՝ տեղադրված առջևից ներքևի և հետևից վերևին մասերում:**
Հակառակ դեպքում, ձեռքերը կարող են սահել և վնասվել:



**Խորհուրդ չի տրվում ձեռքերը կամ այլ պարագաներ ներս տանել դեպի հովացուցիչները , դնել կափույրի տակ կամ, սառնարանի հետնամասում գտնվողանցքերի մեջ:**
Դա կարող է առաջացնել հոսանքահարում կամ վնասվածք:



**Տարօրինակ հոտի կամ ծխի հայտնաբերման դեպքում անմիջապես անջատել էլեկտրական ցանցի լարը և կապ հաստատել սպասարկման կենտրոնի հետ:**
Այն կարող է հրդեհի բռնկման պատճառ դառնալ:




**Հավաքել, վերանորոգել սառնարանը կամ փոփոխություններ կատարել սառնարանի ներքին կառուցվածքում թույլատրվում է միայն համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին:**



**Արգելվում է օգտագործել սառնարանը ոչ կենցաղային նպատակներով (փորձարկվող նյութեր, նավի վրա և այլն):**
Այն կարող է պատահմամբ հանգեցնել վտանգների ինչպես, օրինակ, հրդեհ, հոսանքահարում, պահպանվող մթերքների փչացում կամ քիմիական ռեակցիա:



**Սառնարանի վերամշակման դեպքում խորհուրդ է տրվում հանել դռների ռեզինները և թողնել դարակները իրենց տեղերում:**
Հակառակ դեպքում երեխան կարող է հայտնվել փակված սառնարանում



**Տեղադրել սառնարանը հարթ ամուր գետնի վրա:**
Սառնարանի վայր ընկնելը կանխելու, մարդկային փասներից կամ մահացությունից խուսափելու համար:



**Խորհուրդ չի տրվում սառնարանի հարևանությամբ օգտվել տաքացուցիչ սարքերից:**
Այն կարող է առաջացնել հրդեհ:



**Չսահեցնել ձեռքերը սառնարանի տակ:**
Կարելի է փասվել երկաթյա սկավառակից, որը տեղադրված է ներքևի մասում:



**Թույլ մ իտվեք ճարպերի և յուղերի ներ թափանցումը (այդ թվում նաև բուսական) սառնարանի պլաստմասե մասերի վրա:**
Դրանք քայքայում և փչացնում են մասերը:



**Եթե ցանկանում եք դեն նետել սառնարանը, ապա դիմեք վերամշակման ծառայություն:**
Սառնագենտը կամ մեկուսացնող գազը, որոնք կիրառվում են արտադրության մեջ, պահանջում են հատուկ միջոցների կիրառում դրանց վերամշակման ժամանակ:
Վերամշակումից առաջ, համոզվեք, որ սառնարանի հետնամասում տեղակայված ոչ մի խողովակ փասված չէ:




**Խոնավ ձեռքերով չհպվեք այն ապրանքներին կամ արկղերին, որոնք գտնվում են սառեցման խցիկում:**
Այն կարող է հանգեցնել սառեցման:



**Սառնարանը անջատելուց հետո, վերագործարկումը թույլատրվում է միայն 5 րոպե անց:**
Հակառակ դեպքում սառնարանը կարող է փասվել:




**Սառնարանը հոսանքից անջատելու համար օգտվեք խրոցից և ոչ թե հոսանքի լարից:**
Վարդակից խրոցը հանելու ժամանակ, կարող է հոսանքահարում, կարճ միացում կամ հրդեհ առաջանալ:



**Արգելվում է օգտագործել հրակայուն աէրոզոլներ սառնարանի հարևանությամբ:**
Այն կարող է առաջացնել հրդեհ:



**Սառնարանը մաքրելու կամ լամպը փոխելու ժամանակ անհրաժեշտ է անջատել խրոցը վարդակից:**
Հակառակ դեպքում այն կարող է հոսանքահարում կամ փասա առաջացնել:



**Անջատեք սառնարանը հոսանքից ամպրոպի կամ սառնարանի գործարկման երկար դադարից առաջ:**
Այսպիսով կարելի է կանխել հոսանքահարումը կամ հրդեհումը:



**Սառնարանի վրա մ դրեք ծաղկաման բաժակներ, կոսմետիկա, դեղամիջոցներ կամ այլ անոթներ:**
Այս առարկաների ընկնելու դեպքում կարող է առաջանալ հրդեհ, հոսանքահարում կամ վնաս:



**Սառնարանի դռները փակելու կամ բացելու ժամանակ, ոչ ամուր առարկաները կարող են ներքև ընկնել և վնասել:**
Զգուշորեն պահեք շշերը և այլ մեծ ծավալով տարաները դռների զամբյուղներում:



**Վարդակը պետք է լինի հեշտ հասանելի տեղում՝ անհրաժեշտության դեպքում այն արագ անջատելու համար:**

**Դռները կտրուկ փակելու դեպքում, սառնարանի մյուս դուռը կարող է բացվել, քանի-որ սառնարանի խցիկները միացած են իրար օդատար խողովակներով:**

## ⚠ ԶԳՈՒՇԱՑԵՔ !

Սարքը նախատեսված չէ այն անձանց համար (ներառյալ երեխաների), ովքեր ունեն ցածր ֆիզիկական, զգայական կամ մտավոր կարողություններ կենսական փորձի կամ գիտելիքների բացակայություն, եթե սույն անձիք վերահսկման տակ չեն գտնվում կամ կիրառման կանոնների վերաբերյալ իրազեկված չեն այն անձի կողմից, պատասխանատու ենէ վերջիններիս անվտանգության համար: Երեխաները պետք է գտնվեն մեծահասակների ուշադրության ներքո, որպեսզի թույլ չտան խաղալու սարքի հետ:

## ⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Մի օգտագործեք էլեկտրական սարքավորումները մթերքները պահպանող սարքավորման ներսում, եթե միայն դրանք չեն հակասում արտադրողի խորհուրդներին:

## ⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Մի օգտվեք մեխանիկական սարքերից կամ այլ միջոցներից գերսառեցման գործընթացի համար, բացառությամբ այն դեպքերի, որը խորհուրդ է տրվում արտադրողի կողմից:

## ⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Խուսափեք սառնագենտի կոնտուրի վնասումից:

## ⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Մի խցանեք օդափոխիչ անցքերը, որոնք տեղադրված են սարքավորման կորպուսում կամ տեղադրած են ներսում:

## ⚠ ԶԳՈՒՇԱՑԵՔ ! ԲՌՆԿՄԱՆ ՎՏԱՆԳ !

(R600a) Իզոբուտանը հանդիսանում է անվտանգ շրջակա միջավայրի համար, լինելով միևնույն ժամանակ հրակայուն գազի տեսակ:
Չի վնասում օզոնային շերտը:
Սառնարանի տեղափոխման կամ տեղադրման ժամանակ, անհրաժեշտ է հետևել, որպեսզի սառնարանային կոնտուրի ոչ մի տարր չվնասվի: Սառեցման կոնտուրի արտահոսքի ժամանակ հրակայուն գազային խառնուրդից խուսափելու համար, տարածքի մեծությունը, որտեղ տեղադրված է սառնարանը, պետք է լինի ավելին, քան նվազագույն թույլատրելի չափը՝ պայմանավորված սառնագենտի քանակով: Յուրաքանչյուր 8 գ Սառնագենտ R600a –ի համար պետք է 1 մ³-ից ոչ պակաս տարածք, որտեղ տեղադրվելու է սառնարանը: Տվյալ սառնագենտի պայթունավտանգ խտության ծավալը օդի մեջ կազմում է 1.8 %: Սառնագենտի կիրառելի քանակը ցուցադրված է պիտակի վրա սառնարանի ներսում:

Սառնագենտի արտահոսքը կարող է պայմանավորված լինել ոչ բավարար ցածր ջերմաստիճանով՝ պաղեցման և սառեցման խցիկներում:

Արտահոսքը հայտնաբերելու դեպքում, վերացրեք բռնկման աղբյուրը, օդափոխեք տարածքը մի քանի րոպեների ընթացքում: Սառնարանի կոնտուրի տարրերից առաջացած գազի արտահոսքը կարող է առաջացնել աչքերի և մաշկի բորբոքում և վնասել դրանք:

Արգելվում է միացնել սառնարանը, որն ունի սառնարանային կոնտուրի վնասվածության նախանշաններ: Կասկածի դեպքում դիմել վաճառողին կամ համապատասխան սպասարկման կենտրոն:

## ՍԱՌՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

Մոդելներ:

GA**589**** GA**489T***
GA**539**** GA**439T***
GA**499**** GA**529****
GA**489**** GA**429****
GA**439****




*Հանդիպում է ոչ բոլոր մոդելների հավաքածուի մեջ:

### ՆՇՈՒՄ

Եթե որոշ մասեր բացակայում են ձեր սառնարանում, հնարավոր է, դրանք մտնում են այլ մոդելների հավաքածուի մեջ:
Արտադրող ընկերությունն իրավունք ունի փոփոխություններ մտցնել սառնարանի փաթեթավորման մեջ   առանց նախնական ծանուցման:

## ԿԼԻՄԱՏ ՀԱՄԱԿԱՐԳ

Կլիմատ համակարգը նշված է սառնարանի պիտակի վրա, տեխնիկական նկարագրությամբ տեղադրված սառնարանի ներսում: Արգելվում է օգտագործել սառնարանը սահմանված ջերմասիտճանից առավել բարձր ջերմաստիճանիի դեպքում: Կլիմատ համակարգը սահմանում է սառնարանի շահագործման պայմանները:

| Դաս | Նշանակում | Շրջակա միջավայրի ջերմաստիճանի դիապազոն, °C |
|---|---|---|
| Չափավոր ափ գրանցածած դիապազոն | SN | +10 ից +32 |
| Չափավոր | N | +16 ից +32 |
| Մերձարևադարձ ային | ST | +16 ից +38 |
| Արևադարձային | T | +16 ից +43 |

## ՏԵՂԱԴՐՈՒՄ

- Տեղադրել սահմանափակող հենակները սառնարանի ետին պատի վերնի անկյունների մոտ, ինչպես ցուցադրված է նկար1-ում: Հենակները տրամադրվում են սառնարանի հետ մեկտեղ:
- Սառնարանը շարժական չէ: Վերևից, հետևի և կողային մասերում, պետք է լինի նվազագույնը 5 սանտիմետրանոց ազատ տարածք օդի շրջանառության և էներգոսպառման նվազեցման համար:
- Մի տեղադրեք սառնարանը ջերմության աղբյուրի, արևային ալիքների կամ բարձր խոնավության գոտում:
- Սառնարանը հանդիսանում է անընդհատ աշխատող սարք և բաց է թողնում իրեն բնորոշ ձայներ (տես. էջ. 24 «Սառնարանի աշխատանքի առանձնահատկությունները») հետևաբար նպատակահարմար չէ տեղադրել այն ննջարանում կամ հանգստի համար նախատեսված վայրերում:
- Համոզվեք, որ լարված էլեկտրական հոսանքը նշված ուղեցույցում համապատասխանում է ձեր տան հոսանքի պարամետրերին:
- Սառնարանը պատի հարևանությամբ տեղադրելու դեպքում, նախապես համոզվեք, որ կա բավականաչափ տարածք դռները ավելի քանի 90 աստիճանի անկյան տակ բացելու համար որպեսզի հնարավոր լինի հանել արկղերը և դարակները:
- Մի հանեք սառնարանի ետնամասում տեղադրված կպչուն պիտակները: Դրանք կատարում են դեկորատիվ գործառույթ փակելով տեխնոլոգիական անցքերը:
- Թրթռումը կանգնեցնելու համար, ստուգեք սառնարանի դիրքը հարթության վրա: Ըստ անհրաժեշտության, կարգավորեք սառնարանի ոտնակները գետնի վրա, անհարթությունը վերացնելու համար: Որպեսզի դռները ավելի լավ փակվեն, սառնարանը պետք է տեղադրված լինի թեթևակի դեպի հետ: Մի փոքր թեքել սառնարանը կարգավորիչ ոտնակները պտտելու համար: Սառնարանի առջևի մասը բարձրացնելու համար , պտտեք կարգավորիչ ոտնակները հակառակ ժամացույցի սլաքնի ուղղության ( ), իսկ իջեցնելու համար` – ժամացույցի սլաքի ( ).
- Նախքան օգտագործելը մարմակրկիտ լվացեք սառնարանը: Խորհուրդ չի տրվում լվանալ սիլիկոնային քուսքը, որը քսվում է դռների ռեզիններին և կորպուսի դիմային մասին դռան ամրակների (պետլի) կողմից: Քուսքը թույլ չի տալիս, որպեսզի ռեզինները ջարդվեն դռները փակելու ժամանակ:
- Որոշ մոդելների ճակատային մասում (մետաղական գույնի) թաքցված է թափանցիկ պաշտպանիչ շերտ, որը օգտագործելուց առաջ խորհուրդ է տրվում հանել:
- Տեղավորեք շարժական մասերը համապատասխան տեղերում, ինչպես, օրինակ, սառցամանը և այլն:
- Միացրեք խրոցը վարդակին: Մի միացրեք այս վարդակից այլ էլեկտրական սարքեր:

## ՄԻԱՑՈՒՄ

Սառնարանի առաջին տեղադրման ժամանակ, պետք է թույլ տալ այն աշխատի 2-3 ժամ, որպեսզի սառնարանի ներսում հաստատվի աշխատանքային ջերմաստիճան, և միայն հետո լցնել այն թարմ սառեցված մթերքներով: Սառնարանը անջատելուց հետո կարելի է միացնել այն միայն 5 րոպեից: Այժմ սառնարանը պատրաստ է աշխատալուն:




Նկար 1: Սահմանափակող հենակների տեղադրում:

**ՆՇՈՒՄ**

Սահմանափակող հենակները պետք է տեղադրել սառնարանի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար:

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՀԱՆԱԿ

### Ներքին էկրան



## Լուսա-դիոդային (LED) էկրան: Արտաքին, տիպ 1




Ջերմաստիճանի կարգավորում սառցեման խցիկում

Արագ սառեցում «ԱՐԱԳ ՍԱՌԵՑ.»/ «ԷԿՈ-ՌԵԺԻՄ»

Ոչ ամուր փակված դռան նախազգուշացնող ազդանշան «ՁԱՅՆ. ԱԶԴԱՆՇԱՆ»/ «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ»

Ջերմաստիճանւ կարգավորում պաղեցման բաժնում

Ջերմաստիճանի կարգավորում «OPTI-TEMP ԳՈՏԻ»

ՄԻԱՑՆԵԼ / ԱՆՋԱՏԵԼ Կոճակը

## Լուսա-դիոդային (LED) էկրան: Արտաքին, տիպ 2




Սառեցման խցիկի ջերմաստիճանի կարգավորում

«ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.»

Ոչ ամուր փակված դռան «ՁԱՅՆ.ԱԶԴԱՆՇԱՆ»/ «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ նախազգուշացնող ազդանշան

Ջերմաստիճանի կարգավորումը պաղեցման բաժնում

«ԷԿՈ-ՌԵԺԻՄ»

ՄԻԱՑՆԵԼ / ԱՆՋԱՏԵԼ Կոճակ

**Լուսա-դիոդային (LED) էկրան:**
**Արտաքին, տիպ 3**




Ջերմաստիճանի կարգավորում պաղեցման բաժնում

Ջերմաստիճանի կարգավորում «OPTI-TEMP ԳՈՏԻ»

Սառեցման խցիկի ջերմաստիճանի կարգավորում

Արագ սառեցում «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.»/«ԷԿՈ-ՌԵԺԻՄ»

Ոչ ամուր փակված դռան «ՁԱՅՆ.ԱԶԴԱՆՇԱՆ»/«ԲԼՈԿԱՎՈՐՈՒՄ» նախազգուշացնող ազդանշան

Սառեցման խցիկի լուսավորում

**Լուսա-դիոդային (LED) էկրան:**
**Արտաքին, տիպ 4**




Ջերմաստիճանի կարգավորում պաղեցման բաժնում

Սառեցման բաժնում ջերմաստիճանի կարգավորում

Արագ սառեցում «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.»/«ԷԿՈ-ՌԵԺԻՄ»

Ոչ ամուր փակված դռան «ՁԱՅՆ.ԱԶԴԱՆՇԱՆ» / «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ» նախազգուշացնող ազդանշան

## Լուսա-դիոդային (LED) էկրան: Արտաքին տիպ 5




Ջերմաստիճանի կարգավորում պաղեցման բաժնում

Սառեցման բաժնում ջերմաստիճանի կարգավորում

Ջերմաստիճանի կարգավորում «OPTI-TEMP ԳՈՏԻ»

«ԱՐԱԳ ՍԱՌԵՑ.» արագ սառեցում

«ԷԿՈ-ՌԵԺԻՄ» էներգոխնայման ռեժիմ

Սառեցման խցիկի լուսավորում

«ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ»

## Լուսա-դիոդային (LED) էկրան: Արտաքին տիպ 6




Ջերմաստիճանի կարգավորում պաղեցման բաժնում

Սառեցման բաժնում ջերմաստիճանի կարգավորում

«ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.» - արագ սառեցում

«ԷԿՈ-ՌԵԺԻՄ» - էլեկտրոխնայման ռեժիմ

Սառեցման խցիկի լուսավորում

«ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ»

## ՋԵՐՄԱՍԻՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ելքային ջերմաստիճանը պաղեցման և սառեցման բաժիններում կազմում է 3 °C և –20 °C:

Ըստ ցանկության կարող եք փոփոխել ջերմաստիճանը՝, սեղմելով համապատասխան բաժնի կոճակը:

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 1




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 2




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 3




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 4




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 5: 6




Ներքին լուսա-դիոդային էկրան




## ՆՇՈՒՄ

LED էկրանի վրա արտապատկերվող ջերմաստիճանն ունի իր նշանակությունը, քանի-որ փաստացի ջերմաստիճանը սառնարանի ներսում փոփոխվում է արտաքին գործոններից կախված, ինչպիսիք են օրինակ, տեղադրվող մթերքների ջեմաստիճանը և բացվող դռների հաճախականությունը:

Սառնարանը սկսում է գործարկվել բնականոն ռեժիմով միացնելուց հետո 2-3 օր ընթացքում:

## «OPTI-TEMP ԳՈՏԻ» ՕՊՏԻՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԳՈՏԻ

- Սեղմելով կ ոճակը՝ կարելի է ընտրել օպտիմալ ջերմաստիճանը, բանջարեղենի և մրգերի պահպանման, կամ մսի և ձկան սառեցման համար:
- Կարելի է ընտրել ջերմասիտիճանի օպտիմալ դիապազոնը՝ պայմանավորված նրանով, ինչպիսի մթերքներ են այնտեղ պահպանվելու:

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 1: 3




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 5




- Առաջարկվում է երկու ռեժիմ: բանջարեղենի և մրգերի պահպանման համար (2 °C), միս և ձուկ (-1 C)
- Վերջինիս, ինչպես նաև օպտիմալ խոնավության շնորհիվ, ձուկը և միսը ավելի երկար են թարմ պահպանվում:
- ԿԵրբ օպտիմալ ջերմասիտճանի «OPTI-TEMP ԳՈՏԻ» բաժնում միանում է ԲԱՆՋԱՐԵՂԵՆ լույսը , նշանակում է միացել է բանջարեղենի և մրգերի օպտիմալ ջերմաստիճանը:

Արտաքին լուսա-դիոդային
էկրան, տիպ 1; 3




Արտաքին լուսա-դիոդային
էկրան, տիպ 5




- Երբ վառվում է ՄԻՍ լույսը «ԳՈՏԻ OPTI-TEMP» օպտիմալ ջերմաստիճանի գոտում, ապա միացել է մսի և ձկան պահպանման օպտիմալ ջերմաստիճանը:

Արտաքին լուսա-դիոդային
էկրան, տիպ 1; 3




Արտաքին լուսա-դիոդային
էկրան, տիպ 5




- TՕպտիմալ ջերմաստիճանի գոտու ջերմաստիճանը պահպանվում է -2 ℃ ~3 ℃ դիապազոնում ըստ սահմանված ռեժիմի և անկախ շրջակա միջավայրի ջերմաստիճանից:

## «ԱՐԱԳ. ՍԱՌԵՑ.» - ԱՐԱԳ ՍԱՌԵՑՈՒՄ

- Եթե անհրաժեշտ է արագ սառեցնել մթերքները, կարող եք օգտվել արագ սառեցում գործառույթից: Սեղմել մեկ անգամ «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.» (արագ սառեցում) կոճակը Վառվում է «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.» լույսը (արագ սառեցում) և սկսվում է արագ սառեցումը:
- Արագ սառեցումը տևում է մոտ 24 ժամ: Այս գործառույթի ավարտից հետո սառնարանը ավտոմատ անցում է կատարում նախորդ վիճակին (նախկինում սահմանված ջերմաստիճանի ռեժիմ): Եթե ցանկանում եք դադարեցնել արագ սառեցումը, սեղմել «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.» կոճակը ևս մեկ անգամ, լույսը կմարի և գործողությունը կդադարի, իսկ սառնարանը կվերադառնա նախկին վիճակին (նախորդ ջերմաստիճանի ռեժիմ):

Արտաքին լուսա-դիոդային,
տիպ 1; 3; 4




Արտաքին լուսա-դիոդային էկրան,
տիպ 2




Արտաքին լուսա-դիոդային էկրան,
տիպ 5; 6




Ներքին լուսա-դիոդային էկրան




- Արագ սառեցման ռեժիմը միացնելու համար, սեղմել մեկ անգամ «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ./ԷԿՈ-ՌԵԺԻՄ» կոճակը արտաքին լուսա-դիոդային էկրանի վրա, տիպ 1; 3; 4
- Կ«ԷԿՈ-ՌԵԺԻՄ» -ը միացնելու համար, ևս մեկ անգամ սեղմեք այդ կոճակը: Երրորդ անգամ կոճակը սեղմելու դեպքում, երկու ռեժիմներն էլ անջատվում են և սառնարանը վերադառնում է նախկին ջերմաստիճանային ռեժիմին:

Արտաքին լուսա-դիոդային,
տիպ 1; 3; 4



**ՆՇՈՒՄ**

«ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.» ռեժիմի միացման դեպքում, վառվում է «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ», լույսը, մյուս կոճակները չեն աշխատում: Եթե այս գործառույթը Ձեզ այլևս պետք չէ, սեղմել «ԷԿՈ-ՌԵԺԻՄ» կոճակը: Կոճակները կապաարգելափակվեն, իսկ սառնարանը կվերադառնա նախկին սահմանված ջերմաստիճանին:

**ՆՇՈՒՄ**

Էլեկտրոէներգիայի խնայման համար, արտաքին էկրանը անցում է կատարում խնայման ռեժիմ. – բոլոր ցուցիչների լույսը անջատվում է  բացառությամբ «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ»-ից (միայն արտաքին լուսա-դիոդային էկրանի համար, տիպ 1; 2):

## «ԷԿՈ-ՌԵԺԻՄ» ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԽՆԱՅՄԱՆ ՌԵԺԻՄ

Այս ֆունկցիան ներառում է էլեկտրոէներգիայի խնայման ռեժիմը, որը հարմար է երկար ժամանակով բացակայելու դեպքում: Այն օգնում է նվազեցնել էներգոսպառումը:
Այս ֆունկցիան միացնելու համար, սեղմեք «ԷԿՈ-ՌԵԺԻՄ», կոճակը և, լույսը կվառվի: Կոճակի վրա երկրորդ անգամ սեղմելու դեպքում այս ֆունկցիան անջատվում է:

Արտաքին լուսա-դիոդային, տիպ 1; 3; 4




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 2




Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 5; 6




Ներքին լուսա-դիոդային էկրան




## «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ» (արտաքին լուսա- դիոդային էկրանով մոդելների համար)

- «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ» կոճակը սեղմելու դեպքում մյուս կոճակները չեն աշխատում:
- ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ կոճակը – միացնում է արգելափակումը կամ ապաարգելափակումը: Սառնարանի էկրանը արգելափակելու ապաարգելափակելու համար, սեղմել «ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ» կոճակը 3 վայրկյանի ընթացքում:

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 1; 2




Ապաարգելափակված է Արգելափակված է Ապաարգելափակված է

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 3; 4




Ապաարգելափակված է Արգելափակված է Ապաարգելափակված է

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 5; 6




Ապաարգելափակված է Արգելափակված է Ապաարգելափակված է

## ԻՆՔՆԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Էկրանն ունի ինքնախտորոշման ֆունկցիա: Անսարքության դեպքում սառնարանի կոճակները չեն աշխատում, իսկ ցուցիչը ցույց է տալիս անսարքության կոդը: Այս դեպքում մի անջատեք  էներգոսնուցումը և անմիջապես զանգահարեք սերվիս կենտրոն: Եթե անջատեք սառնարանը, ապա սպասարկման կենտրոնի աշխատակցից երկար ժամանակ կպահանջվի` գտնելու անսարքությունը:

## ՈՉ ԱՄՈՒՐ ՓԱԿՎԱԾ ԴՌԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՂ ԱԶԴԱՆՇԱՆ «ՁԱՅՆ. ԱԶԴԱՆՇԱՆ»

- Եթե սառնարանի դուռը բաց է մնում որոշ ժամանակ (˜ 1 րոպե), ապա միանում է ձայնային ազդանշան, որը կրկնվում է 30 վայրկյանը մեկ:
- Չփակված դռան ձայնային ազդանշանը կարելի է միացնել և անջատել, կարճ սեղմելով «ՁԱՅՆ. ԱԶԴԱՆՇԱՆ» կոճակի վրա (բոլոր մոդելների վրա):
- Եթե նախազգուշացնող ազդանշանը շարունակում է զնգալ նույնիսկ դռները փակելուց հետո, ապա դիմեք սպասարկման կենտրոն:

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 1; 2; 3; 4




Միաց. Անջատ. Միաց.

## ՄԻԱՑՆԵԼ/ԱՆՋԱՏԵԼ

Այս կոճակով սառնարանը միանում և անջատվում է:
Հերթական անգամ սեղմելով կոճակը «ՄԻԱՑ/ԱՆՋԱՏ», սառնարանը միանում և անջատվում է: Սառնարանը անջատելու համար, սեղմել «ՄԻԱՑ/ԱՆՋԱՏ» կոճակը և սեղմված պահել այն 7 վայրկյանի ընթացքում: Սառնարանը միացնելու համար ` կարճ հպումով սեղմել այս կոճակը:

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 1; 2




Միաց. Անջատ.

### ՆՇՈՒՄ

Էլեկտրաէներգիայի անջատման դեպքում կարգավորումները պահպանվում են:

## ՍԱՌԵՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ (ոչ բոլոր մոդելների դեպքում):

- Սառեցման բաժնի լուսավորում:
- Այս կոճակի սեղմումով կարգավորվում է սառեցման խցիկի լուսավորումը:
- Հաջորդական սեղմումներով կարելի է միացնել անընդմեջ լուսավորման ռեժիմը, նվազեցնել պայծառությունը նույն ռեժիմի տակ և անջատել այն:
- Սառեցման բաժնի դռները բացվելու ժամանակ լույսը միշտ վառվում է:

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 3:



Միաց. Անջատ.

Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 5:




Միաց. Անջատ.

## ՍԱՌԵՑՄԱՆ ԲԱԺԻՆ

(Կոմպլեկտավորումը պայմանավորված է մոդելով)




1. «MOIST BALANCE CRISPER», օպտիմալ խոնավության գոտի, շարժական արկղ մրգերի և բանջարեղենի պահպանման համար:
2. Մսի կամ ձկան սառեցման կամ ապասառեցման «FRESH 0 ZONE» թարմության գոտի: Այս գոտում գտնվող բանջարեղենը կամ միրգը կարող ենէ սառել:

«FRESH 0 ZONE» գոտու ջերմաստիճանը փոփոխվում է հետևյալ ձևով:

- երբ պաղեցման բաժնում ջերմաստիճանը դրված է 6 ℃ – ի վրա, «FRESH 0 ZONE» թարմության պահպանման գոտում ջերմաստիճանը կազմում է 4 ±2 ℃;
- երբ պաղեցման բաժնում ջերմաստիճանը դրված է 3 ℃, «FRESH 0 ZONE» իսկ թարմության գոտում՝ կազմում է 0 ±2 ℃;
- κերբ պաղեցման բաժնում ջերմաստիճանը դրված է 0 ℃, ջերմաստիճանը «FRESH 0 ZONE» պահպանման գոտում կազմում է -3 ±2 ℃.

## ԻՆՉՊԵՍ ՀԱՆԵԼ «OPTI-TEMP ԳՈՏՈՒ» ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐԿՂԸ

«ЗОНА OPTI-TEMP», շարժական արկղը հանելու համար, քաշեք այն դեպի ձեզ մինչև վերջ, այնուհետ բարձրացրեք այն երկու ձեռքերով:



## ԻՆՉՊԵՍ ՀԱՆԵԼ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐԿՂԻ ԿԱՓՈՒՅՐԸ

Բանջարեղենի շարժական արկղը հանելու համար, բարձրացրեք արկղի կափույրը և քաշեք դեպի ձեզ:



## ԻՆՉՊԵՍ ՀԱՆԵԼ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐԿՂԸ

Հանեք ներքևի դռան զամբյուղը՝ բարձրացնելով այն դեպի վերև: Քաշեք արկղը մինչև վերջ: Բարձրացրեք արկղը առջևից և քաշեք դեպի ձեզ:



## ՇՇԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՏԱԿԴԻՐ (ոչ բոլոր մոդելների դեպքում)

Տակդիրը նախատեսված է շշերի պահպանման համար: Շշերի տակդիրը կարելի է շրջել և տեղավորել դարակի տակ: Այն տեղ է ազատում սառնարանում:



տակդիրը կիրառվում է



տակդիրը չի կիրառվում

## ՇԱՐԺԱԿԱՆ ԱՊԱԿԵ ԴԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Սառնարանի դարակները հանելու համար, անհրաժեշտ է նախապես բարձրացնել դրանք և քաշել դեպի ձեզ: Սխալ եղանակով հանելու դեպքում հնարավոր է փասել սառնարանի ներսի մասերը:



## ՇԱՐԺԱԿԱՆ ԱՊԱԿԵ ԴԱՐԱԿ

Սառնարանում բարձր առարկաներ դնելու համար, ինչպես օրինակ շշեր, անհրաժեշտ է՝

Բարձրացնել դարակի առջևի մասը՝ իրելով այն կիսով չափ հետ:



Ստեղված իրավիճակում հնարավոր է բարձրացնել դարակի երկու կեսեն էլ դեպի վերև  ազատելով ավելի շատ տարածք:



Դարակն իր տեղը դնելու համար, անհրաժեշտ է իջեցնել երկու կեսերն էլ ներքև, այնուհետ քաշել ներքևի կեսը դեպի Ձեզ:

### ԴԱՐԱԿԻ ՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՌՆԱՐԱՆԻՑ

- Բարձրացնել դարակի առջևի կեսը՝ հրելով  մյուս կեսը հետ:
- Հանել երկու կեսերը՝ բարձացնելով դրանք վերև:
- Բարձրացնել դարակը և քաշել դեպի ձեզ:



Սառնարանում դարակները տեղադրելու համար, անհրաժեշտ է նույն գործողությունները կատարել հակառակ հերթականությամբ:

## ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐԿՂԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ և ՀԱՆՈՒՄ ՍԱՌԵՑՄԱՆ ԲԱԺՆՈՒՄ

- Լավ օդափոխություն ապահովելու համար, սառեցման բաժնի արկղերը պետք է հրել մինչև վերջ:
- Սառեցման բաժնում կան մետաղական դարակներ, որը թույլ կտա մեծացնել ապրանքների պահպանման ծավալը: (Մետաղական դարակները կիրառելի են ոչ բոլոր մոդելների համար:)
- Մեծ քանակությամբ մթերքներ սառեցման խցիկում պահելու համար կարելի է հանել վերևի և մեջտեղի արկղը և պահպանել մթերքները դարակի վրա:

Սառեցման բաժնի արկղերից յուրաքանչյուրը հանելու համար, անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները

- Քաշել արկղը մինչև վերջ:
- Բարձրացնել արկղի առջևի մասը և քաշել դեպի ձեզ:



Արկղերից յուրաքանչյուրը սառեցման բաժին հետ տեղավորելու համար, անհրաժեշտ է նույն գործողությունը կատարել հակառակ հերթականությամբ:

- Դնել արկղիկը 45° անկյան տակ:
- Իջեցնել արկղի առջևի մասը  զուգահեռ մյուսներին:
- Հրել ներս արկղը մինչև վերջ:

Հետևեք, որ չառաջանա դեֆորմացիա:



## ՆՇՈՒՄ

1. Դարակների և արկղերի հանելու ժամանակ, չպետք է գործադրել ավելորդ ջանքեր – վերջինս, ինչպես նաև արկղերը սխալ հանել կամ դնելու գործողությունները կարող են փասել սառնարանի ներսին պատերը:
2. Երաշխիքը չի տարածվում մեխանիկական փասսների վրա (ճեղքեր, դաջվածքներ, բացման հետքեր և այլն) որոնք առաջացել են պահպանման կանոնների խախտման, փոխադրման, շահագործման և սառնարանի սպասարկման, ավելորդ ֆիզիկական ազդեցության արդյունքում:

## ՍԱՌՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հանեք սառցամանը սառեցման խցիկից: Լցրեք այն ջրով: Սառցամանը դնել սառեցման խցիկի վերևի կամ մեջտեղի արկղում:
Եթե օգտագործելու եք սառույցի կտորները ապա պետք է, որքան հնարավոր է շուտ միացնել «ԱՐԱԳ ՍԱՌԵՑ.» (արագ սառեցում ) ռեժիմը:



Սառույցի կտորները հանելու համար, վերցրեք սառցամանը ծայրերից և թեթևակի ճկեք այն:

## ԽՈՐՀՈՒՐԴ

Որպեսզի սառույցի կտորները հեշտությամբ դուրս գան, նախապես ողողոք այն ջրով:

## ՄԹԵՐՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

- Խորհուրդ չի տրվում սառնարանում պահել մթերքներ, որոնք արագ փչանում են ցածր ջերմաստիճանի ներքո, ինչպես օրինակ բանանը և սեխը:
- Նախքան սառնարանում տաք մթերքներ կամ խմիչքներ դնելը, պետք է սառեցնել դրանք մինչև սենյակային ջերմաստիճանի:
- Տաք մթերքները և խմիչքները կարող են փչացնել այլ մթերքները:
- Մթերքների պահպանման համար օգտվեք փակիչներով տարաններից: Այն կանխում է խոնավությունը և օգնում պահպանել մթերքների համն ու սնուցող տարրերը:
- Սառը օդի փոխանակման համար, չպետք է խցանել սառեցման խցիկի հետին պատի մոտ գտնվող անցքերը:
Ազատ օդափոխանակումը թույլ է տալիս հավասարաչափ պահպանել ջերմաստիճանը ողջ խցի մեջ:
Մթերքները, որոնք ամուր հենված են անցքերի մոտ, կփչանան օդի ցածր ջերմաստիճանի ազդեցության ներքո:
- Պետք չէ դռները հաճախակի բացել: Դռները բացելու ժամանակ տաք օդը ներս է մտնում, որը բարձրացնում է ընդհանուր ջերմաստիճանը:
- Խորհուրդ չի տրվում պահել դռան զամբյուղում չափից շատ մթերքներ` դռների փակման խնդիրներից խուսափելու համար:
- Մի սառեցրեք նախկինում հալեցված մթերքները: Վերջինիս արդյունքում տեղի է ունենում համային և օգտակար էլեմենտների կորուստ:
- Չպետք է պահել սառնարանում դեղամիջոցներ, գիտական հետազոտությունների համար նյութեր կամ այլ նյութեր, որոնք պահանջում են ջերմաստիճանի խիստ պահպանում:
- Եթե անհրաժեշտ է արագ սառեցնել թարմ մթերքները, դրեք այն ներքին քաշովի արկղում և միացրեք «ԱՐԱԳ.ՍԱՌԵՑ.» (արագ սառեցում) ռեժիմը:
- Սառեցված մթերքները պետք է պահել փաթեթի մեջ (պոլիէթիլենային, ալյումինե փայլաթիթեղի և այնի մեջ) սառեցման խցիկում:
- Մի պահեք շշերը սառեցման խցիկում -սառելու դեպքում դրանք կարող են պայթել:

## ՄԱՔՐՈՒՄ

1. Մաքրելուց առաջ համոզվեք, որ էլեկտրասնուցումը անջատված է:
2. Սառնարանը անհրաժեշտ է ներսից և դրսից մաքրել մաքուր, տաք ջրի մեջ լվացման հեղուկով թրջված անձեռոցիկով: Այնուհետ սրբեք սառնարանը չոր անձեռոցիկով:
3. Մաքրելուց հետո ստուգեք, որ հոսանքի լարը փասված չէ: Այնուհետ ամուր միացրեք խրոցը վարդակին:

**ԶԳՈՒՇԱՑԵՔ!**
Արգելվում է օգտվել հղկող միջոցներից՝ բենզին, բենզոլ, լուծիչ, խլորգիդրատ, տաք ջուր, կոպիտ խոզանակ և այլն, որոնք կարող են փասել սառնարանի մակերեսը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԷԼԵԿՏՐՈՄՆՈՒՑՄԱՆ ԶԱԽՈՂՈՒՄ

Էլեկտրասնուցման դադարը 1~2 ժամվա ընթացքում չի փչացնում պահպանվող մթերքները: Աշխատեք այս ընթացքում քիչ բացել և փակել սառնարանի դռները:

### ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

- Բոլոր մթերքները և այլ առարկաները հանել սառնարանից: Ամրացնել շարժական մասերը (դարակներ, արկղեր, դռան զամբյուղներ):
- Հատակ ը և կարգավորող ոտնակները չփասելու համար, տեղաշարժելուց առաջ պտտել դրանք ժամացույցի սլաքին հակառակ:
- Սառնարանը պետք է հուսալի ամրացնել մեքենայի մեջ՝ կանխելու տեղափոխման ժամանակ մեքենային մեջ ընկնելուց և հարվածներից:
- Սառնարանը պետք է տեղափոխվի հորիզոնական դիրքով փակ տրանսպորտային միջոցով: Գործարանային փաթեթավորումը չպետք է փասվի տեղափոխման ժամանակ:
- Բեռնելու և բեռնաթափման ժամանակ սառնարանը պետք է հեռու պահել հարվածներից:

### ՄԻԱՑՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ՝

Եթե սառնարանի տեղափոխումը կատարվում է սառը եղանակային պայմաններում, ապա հանեք այն փաթեթավորումից տաք տարածքում և մի միացրեք այն 12 ժամ:

**ԶԳՈՒՇԱՑԵՔ!**
Մի տեղաշարժեք և խոնարհեք սառնարանը աշխատելու ժամանակ: Կոմպրե սորում կարող է առաջանալ աղմուկ: Տվյալ առանձնահատկությունը չի ազդում կոմպրեսորի աշխատունակության վրա:

## ՍԱՌՆԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջերմաստիճանային փոփոխությունների ազդեցությամբ սառնարանի հիմնական մասերից կարող են լսվել ձայնային ճայթյուններ: Թերմակարգավորիչի և Կոմպրեսորի բնորոշիչ ձայները դիտվում են նորմալ, քանի-որ առաջանում են սարքավորման էլեկտրասնուցման աշխատանքի ժամանակ:
Սառեցման համակարգի ներսում շրջանառվող u սՍառնագենտը կարող է ոչ բարձր բլթալ, եթե նույնիսկ կոմպրեսորը չի աշխատում: Մի անհանգստացեք, այն համարվում է նորմալ: Սառնարանի աշխատանքի ժամանակ կարող են լսվել
- Կոմպրեսորի աշխատանքի ձայնը:
- Հովացուցիչի թևերի ձայնը
- No Frost սառեցման համակարգի շրջանառվող օդի հոսանքի ձայնը:
- Ռելեի կտկտոցը
- Օդային փականի տատանման՝ բացվել և փակվելու առաջացած խշշոցը:
- Սառնագենտի խշշոցը, որը պտտվում է սառնարանային համակարգի խողովակների մեջ:
- թեթև շաչոց նյութերի ջերմաստիճանային դեֆորմացիաների ժամանակ:
Տվյալ ձայները կապ չունեն որևէ թերության հետ և կրում են ֆունկցիոնալ բնույթ:

## ԱՆՏԻԿՈՆԴԵՆՍԱՏՈՐԻ ԽՈՂՈՎԱԿ

- Անտիկոնդենսատորի խողովակը տեղադրված է կորպուսի մեջ, սառնարանի դիմային մասից՝ խոնավության խտությունը կանխելու համար:
- Այս մասերում սառնարանը կարող է ուժեղ տաքանալ, հատկապես առաջին միացումից հետո կամ շրջակա միջավայրի բարձր ջերմաստիճանի ներքո:



Անտիկոնդենսատորային խողովակ:

## ԴՌՆԵՐԻ ԿԱԽՈՒՄ

Սառնարանը նախագծված է այնպես, որ դռները կարող են բացվել աջ և ձախ, ըստ ձեր խոհանոցի դիրքի:

**ՆՇՈՒՄ**

Ըստ անհրաժեշտության խորհուրդ է տրվում կանչել համապատասխան որակավորում ունեցող վարպետի՝ դռները կախելու համար: Երաշխիքային պարտավորվածությունները չեն գործում դռների տեղադրման պարագայում:

### ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- Պտուտակավոր բանալի 10 մմ և 6 մմ;
- Վեցանկյուն գործիք 5 մմ-ով;
- Խաչաձև պտուտակահան:

**ԶԳՈՒՇԱՑԵՔ!**

1. Սառնարանի դռները կախելուց առաջ, անջատեք էլեկտրական հոսանքի լարը և բեռնաթափեք սառնարանը մթերքներից, հեռացրեք աքսեսուարները – դարակներ և արկղեր:
2. Մի դրեք սառնարանը հատակին
3. Դրսևորեք զգուշավորություն և մի փասեք դուռը հավաքելու կամ քանդելու ժամանակ:

- Հանեք պաղեցման բաժնի դռան վերնի կափարիչը (2)՝ թուլացնելով պտուտակները (1):
- Տեղադրել ամրացնող գլխիկը (3) վերնի կափարիչի (2) հակառակ կողմից:
- Անջատեք միացման մետաղալարը (4) (Արտաքին էկրանով մոդելների համար):




- Պտուտակները հանելով (5), քաշեք դեպի ձեզ, այնուհետ, առանց փասելու լարը, բարձրացրեք կափարիչը (6):
- Հանեք մետաղալարի բռնիչը (7) և ամրացրեք այն կափարիչի(6) կենտրոնական մասում:
- Տեղադրել գլխիկը (9) կափարիչի (6) հակառակ կողմից:




- BՀանել մետաղալարի բռնիչը (8) կափարիչի կենտրոնական մասից (6) և ամրացնել այն կափարիչի հակառակ կողմից (6):

• Տեղափոխել լարերի հանգույցը (10) կափարիչի (6) հակառակ կողմ:




• Հանել դռան վերևի ամրակը (12) (պետլի)՝ պտտեցնելով հեղյուսները (11):
• Հանել պաղեցման բաժնի դուռը:
• Պտտեցնելով հանել ձողը (13) և ամրացնել հակառակ կողմից ամրակները (12)՝ օգտագործելով 6 մմ բանալի:




• Փոխել կենտրոնական դռան ամրակը (15), պտտեցնելով հեղյուսները (14) 5 մմ վեցանկյուն գործիքով
• Բացել սառեցման խցիկի դուռը:
• Ամրացրեք գլխիկը (16) սառնարանի հակառակ կողմից:




• Հանեք դռան ներքին ամրակը(18) ՝ հանելով պտուտակները(17):
• Պտտեցրեք ձողը (19) և ամրացրեք այն ամրակի (18) հակառակ կողմից՝ կիրառելով 6 մմ բանալի:
• Հանել սառեցման խցի վերևի դռան պտուտակի գլխիկը (20) և տեղադրել հակառակ կողմից:




• Հանել սառեցման խցիկի ներքևի մասից սահմանափակիչը (21), կցորդիչը (22) և փակիչը (23)՝ պտտեցնելով պտուտակները (24) և ամրացնելով դրանք հակառակ կողմից: Նույն գործողությունները կատարել սառեցման խցիկի դռան համար:

Մոդելների համար:
GA**489Y*/GA**489Z*/GA**589Y*/GA**589Z*
GA**439Y*/GA**439Z*/GA**539Y*/GA**539Z*
GA**429Y*/GA**429Z*/GA**529Y*/GA**529Z*




* Կցորդիչը* մտնում է միայն պաղեցման բաժնի դռան հավաքածուի մեջ:

Մոդելների համար:
GA**489T*/GA**489S*/GA**439T*



Մոդելների համար:
GA**489Y*/GA**439Y*/GA**429Y*
GA**589Y*/GA**539Y*/GA**529Y*:

- Հանել սառեցման և պաղեցման բաժինների դռան բռնակները (1), (5), հեռացնելով փակիչները (2), իսկ այնուհետ պտուտահանելով պտուտակները (3):
- Հանեք պտուտակի գլխիկը (4):
- Հակառակ կողմից տեղադրել բռնակները (1), (5) և պտուտակի գլխիկները (4) հակառակ հերթականությամբ:




Մոդելների համար:
GA**489Z*/GA**439Z*/GA**429Z*
GA**589Z*/GA**539Z*/GA**529Z*

- Հանել պաղեցման և սառեցման բաժինների դռների մեխանիկական բռնակները (1), (5) հեռացնելով փակիչները (2), իսկ այնուհետ պատուտակահան անելով պտուտակները (3):
- Հանեք պտուտակի գլխիկը (4):
- Հակառակ կողմից տեղադրել մեխանիկական բռնակները (1), (5) և պտուտակի գլխիկները (4) հակառակ հերթականությամբ:




Մոդելների համար:
GA**489TG**:

- Հանել պտուտակի գլխիկը (2) և սլայդերը (1) և տեղադրել այն հակառակ կողմից, ինչպես ցուցադրված է նկարում:




Մոդելների համար:
GA**489TASB/GA**489TADN
GA**489T*QZ/GA**489TGQZ
GA**489S***

- Հանեք սլայդերը (1) և դրեք հակառակ կողմում, ինչպես ցուցադրված է նկարում:




- Տեղադրեք սառեցման խցի ներքևի դռան ամրակը (18), այնուհետ խցիկի դուռը, կենտրոնական դռան ամրակը (15), պաղեցման բաժնի դուռը, վերևի դռան ամրակը (12), միացրեք միացման մետաղալարը (4), տեղադրեք կափույրը(6) և (2)-ը հակառակ հերթականությամբ:

## SmartDiagnosis™ (շարժական զննում)

Կիրառեք այս ֆունցիան միայն Սպասարկման Կենտրոնի խորհրդով (հեռախոսահամարը նշված է երաշխիքային կտրոնում):
Ձայնը, որն ապահովում է տվյալների փոխանցում Սպասարկման կենտրոնին, նման է ֆաքսի ձայնին:

> **❗ ՆՇՈՒՄ**
>
> SmartDiagnosis™ Ֆունկցիան (շարժողական զննում) չի գործում, եթե սառնարանը միացված չէ հոսանքին: Տվյալ դեպքում, թերությունների վերացումը անհրաժեշտ է իրականացնել առանց SmartDiagnosis™-ի (շարժողական զննում):

Սառնարանում թերությունների առաջացման ժամանակ, զանգահարեք սպասարկման կենտրոն և ուշադիր հետևեք մասնագետի հրահանգներին ճիշտ հերթականությամբ:

1. Ակտիվացնել SmartDiagnosis ռեժիմը:
   - Բացեք դուռը, սեղմեք«Արգելափակում ոչ ամուր փակված դռան ձայնային ազդանշան» կոճակը և պահեք 3 վայրկյան մինչև արգելափակումը , այնուհետ սեղմեք «Սառեցման խցում ջերմաստիճանի Կարգավորում կոճակը » և պահեք այն 3 վայրկյան:

   Արտաքին լուսա-դիոդային էկրան, տիպ 1; 2; 3; 4

   

   3 վայրկ. 3 վայրկ.

   - Ներքին լուսա-դիոդային էկրանի համար: Բացեք դուռը , սեղմեք կոճակը «ՍԱՌԵՑ ԽՑԻԿ» կոճակը, պահեք 3 վայրկյան:

   Ներքին լուսա-դիոդային էկրան

   
   

   3 վայրկ.

   - Արտաքին լուսա-դիոդային էկրանի համար (տիպ 5, 6):
   Փակեք դուռը, սեղմեք «Արգելափակում» կոճակը և պահեք 3 վայրկյան մինչև արգելափակումը միանա, այնուհետ սեղմեք “Սառեցման բաժնի ջերմաստիճանի կարգավորում” և պահեք այն 3 վայրկյան, այնուհետ բացեք դուռը:

   Արտաքին լուսա-դիոդային էկրանի տիպ 5; 6

   
   

   3 վայրկ. 3 վայրկ.

2. Օպերատորի հրահանգներին հետևելով, հեռախոսի բարձրաձայնը մոտեցրեք որքան հնարավոր է մոտ «SmartDiagnosis» նշանին: Պահեք հեռախոսը տվյալ դիրքում, քանի-դեռ չի ավարտվել տվյալների ձայնային փոխանցումը:




> **❗ ՆՇՈՒՄ**
>
> Ավելի ճշգրիտ արդյունքների համար, աշխատեք չշարժել հեռախոսը ձայնային ազդանշանների փոխանցման ժամանակ:

3. Ձեզ կարող են խնդրել կրկնելու տվյալների փոխանցման գործընթացը, եթե սպասարկման կենտրոնի օպերատորը կգնահատի, որ ստացված արդյունքները իրական չեն կամ ոչ լիարժեք:
4. Տվյալների փոխանցման գործընթացը դադարեցնելու և SmartDiagnosis™ աշխատանքը ավարտելու համար, սեղմել “ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ” և «Սառեցման բաժնում ջերմաստիճանի կարգավորում» կոճակներին (արտաքին լուսա- դիոդային էկրան), ներքին էկրանի համար սեղմել «ՍԱՌԵՑ. ԽՑԻԿ» կոճակին:
5. Ձայնային ազդանշանների ավարտից հետո, կարող եք շարունակել խոսակցությունը օպերատորի հետ, որը ստացված տեղեկատվությունը կփոխանցի տեխնիկական բաժին վերլուծության համար:

Նախքան վերանորոգման ծառայության դիմելը, կարդացեք այս բաժինը կամ զանգահարեք հաճախորդների սպասարկման ծառայություն: Այն կօգնի խնայել ժամանակը և փողը: Այս ցուցակը ներառում է ամենատարածված դեպքերը, որոնք չեն հանդիսանում անորակ հավաքածուի կամ մատերիալների արդյունք և չեն օգտագործվել այս սարքավորման մեջ:

| ԽՆԴԻՐՆԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐ |
| --- | --- |
| **Էլեկտրական հոսանքին միացված սառնարանը չի աշխատում:** | • **Խրոցը չի միանում վարդակին:**<br>Ստուգել լարման առկայությունը Ապահովել խրոցի միացումը վարդակին: «Էլեկտրասնուցման աղբյուրին միանալու դեպքում» տես էջ 5:<br>• **Ներքին լուսավորությունը բացակայում է:**<br>Անհրաժեշտ է ստուգել ամուր է միացած խրոցը վարդակին: Եթե լուսա-դիոդային լամպը չի վառվում, դիմել վաճառողին կամ սպասարկման կենտրոն:<br>• **Հոսանքի տատանումներ:**<br>Ստուգել տան լույսը: |
| **Չափազանց բարձր ջերմաստիճան պաղեցման կամ սառեցման բաժիններում:** | • **Սառնարանը շատ մոտ է տեղադրված ջերմության աղբյուրին:**<br>Տես՝ բաժին «Տեղադրում»:<br>• **Սառնարանի դռները հաճախակի բացվում են կամ երկար ժամանակ մնում են ոչ փակված վիճակում:**<br>• **Բաժինների դռները ամուր փակված չեն:**<br>Տես՝ բաժին «Թերությունների փնտրում և վերացում» (Դռները ամուր փակված չեն): |
| **Տատանում, դզզոց կամ ոչ բնորոշ աղմուկ:** | • **Սառնարանը կանգնած է գետնի վրա ոչ ամուր վիճակում:**<br>Կարգավորեք վերջինիս դիրքը կարգավորիչ ոտնակների օգնությամբ: Տես՝ բաժին «Տեղադրում»:<br>• **Սառնարանը կպնում է շրջակա առարկաներին:**<br>Տես՝ բաժին «Տեղադրում»: |
| **Սառուցապատում կամ սառույց:** | • **Դռները ամուր փակված չեն եղել կամ մթերքները խանգարում են դռան փակվելուն:**<br>Տես բաժին «Մթերքների պահպանում»:<br>• **Դռները բացվում են չափազանց հաճախ և երկար ժամանակով:**<br>• **Կոնտեյների ներսում մթերքների սառցապատումը դիտվում է որպես նորմալ երևույթ:** |
| **Դռները ամուր չեն փակվում:** | • **Մթերքները խանգարում են դռների փակվելուն:**<br>Տեղաշարժեք այն մթերքները, որոնք խանգարում են փակել դռները:<br>• **Տես բաժին «Մթերքների պահպանում»:**<br>Սառնարանը տեղադրված չէ գետնի մակերևույթին հավասար: Պտտեցնել կարգավորող ոտնակները: Տեղը, որտեղ տեղադրված է սառնարանը, կարող է լինել անհարթ: Կարգավորող ոտնակների օգնությամբ բարձրացնել սառնարանի առջևի մասը: Տես՝ «Տեղադրում» բաժինը:<br>• **Դռան ռեզինների կեղտոտվածություն:**<br>Զգույշ մաքուր շորով հավաքել աղբը ռեզինե հատվածներից:<br>• **Դռների ոչ ճիշտ կախում:**<br>Տես՝ բաժին «Դռան կախում»: |
| **Չի անջատվում:** | • **Միացած է արագ սառեցման ռեժիմը:**<br>Տես՝ բաժին «Շահագործում» (Արագ սառեցում):<br>• **Սառնարանը տեղադրված է ջերմության աղբյուրին մոտիկ:**<br>Տես՝ “Տեղադրում” բաժինը:<br>• **Սառնարանի դռները հաճախակի բացվում են կամ երկար ժամանակ մնում է չփակված վիճակում:**<br>• **Տաք մթերքների պահպանումը:**<br>Տես բաժին «Մթերքների պահպանում»:<br>• **Բաժինների դռները ամուր փակված չեն:**<br>Տես՝ բաժին «Թերությունների փնտրում և վերացում» (Դռները ամուր փակված չեն): |

| ԽՆԴԻՐՆԵՐ | ՀՆԱՐԱՎՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐ |
|---|---|
| **Սառնարանի կորպուսի վրա առաջանում են խոնավության կաթիլներ:** | • **Այն կարող է տեղի ունենալ բարձր խոնավությամբ շինություններում:**<br>Մաքրել խոնավ մասերը մաքուր անձեռոցիկով: |
| **Ներսում կուտակվում է խոնավություն:** | • **Դռները բացվում են չափազանց հաճախ և երկար ժամանակով:**<br>• **Խոնավ եղանակային պայմաններում, դռան բացելու ժամանակ, խոնավությունը մտնում է ներս օդի հետ միասին:** |
| **Տհաճ հոտ սառնարանում:** | • **Սառնարանի սխալ խնամքը, մթերքների պահպանումը,որոնք ունեն տհաճ հոտ բաց վիճակում:**<br>Տես՝ բաժին «Մթերքների պահպանում»:<br>• **Դռները չեն փակվում մինչև վերջ:**<br>• **Ստուգեք՝ չկան արդյոք փչացած մթերքներ:**<br>• **Անհրաժեշտ է լվանալ սառնարանի ներսում պատերի մակերեսը:**<br>**Տես «Մաքրում» բաժինը:** |

## ՆՇՈՒՄ

Ավելի մանրամասն տեղեկություն սառնարանի սպասարկման կամ կիրառման մասին կարող եք գտնել LG ընկերության պաշտոնական կայքում «Հարցեր և պատասխաններ» բաժնում (www.lg.com/ru/support/product-help).

## ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Երաշխիքի պայմանները. տես՝ երաշխիքի կտրոն:

**ԵՐԱՇԽԻՔԸ ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ հետևյալ դեպքերում;**

- Օգտվողի բողոքների, որոնք առաջացել են մթերքների պահպանման կամ տեղափոխման, շահագործման պայմանների խախտման արդյունքում և որոնք նկարագրված են շահագործման ձեռնարկում:
- Անհաղթահարելի ուժի (ջրհեղեղ, հրդեհ, կայծակ և այլն):
- Վերանորոգման կամ արտադրողի կողմից կոնստրուկտիվ կամ սխեմատիկ տեխնիկական անթույլատրելի փոփոխությունների դեպքում և ոչ լիազորված անձանց կողմից:
- Պետական Տեխնիկական Ստանդարտներից (ՊետՍտանդարտ) խուսափելու և սնուցվող ցանցային նորմերից խուսափելու դեպքում:
- Սարքավորման ոչ ճիշտ տեղադրման և միացման համար:
- Ապրանքի կիրառումը անհատ ձեռնարկատիրության նպատակով:

## ՀԻՆ ՍԱՌՆԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

1. Աղբարկղի այս նշանը ցույց է տալիս, որ վերամշակված էլեկտրական և էլեկտրոնային թափոնները (WEEE) պետք է վերամշակել կենցաղային թափոններից առանձին:
2. Հին էլեկտրական ապրանքները կարող են պարունակել վտանգավոր տարրեր, հետևաբար հին սարքավորման ճիշտ վերամշակումը կօգնի կանխարգելել հնարավոր բացասական հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Հին սարքավորումը կարող է պարունակել պահեստամասեր, որոնք կարող են նորից կիրառվել այլ ապրանքների վերանորոգման, ինչպես նաև այլ արժեքավոր մատերիալներ, որոնք կարելի է վերամշակել սահմանափակ ռեսուրսները պահպանելու նպատակով:



3. Դուք կարող եք տանել ձեր սարքը խանութ, որտեղից այն ձեռք է բերվել, կամ կապ հաստատել տեղական ինքնակառավարման մարմինների հետ մանրակրկիտ տեղեկություն ստանալու (WEEE) էլեկտրոնային և էլեկտրական սարքավորումների թափոնների ընդունման մասին: Ձեր երկրի մասով ամենավերջին տեղեկությունը ստանալու համար կարող եք դիտել հետևյալ հղումը: www.lg.com/global/recycling

LG
Life's Good

EAC

LG ապրանքը վկայագրված է:
Մեր սարքավորումների հավաստագրման մասին տեղեկությունը, հավաստագրի համարի և ժամկետների մասին տվյալները կարող եք ստանալ հաճախորդների սպասարկման ծառայությունից:

Արտադրողներ: «ԷլՋի Էլեկտրոնիքս ՌՈՒՍ» ՍՊԸ:
Հասցե՝ 143160, ՌԴ, Մոսկովյան տարածաշրջան, Ռուսական Շրջան, Դորոխովսկի միկրոշրջ., 86 կմ , Մինսկի շոսսե, տուն 9:

| | |
|---|---|
| **8–800–200–76–76** | ՌՈՒՍԱՍՏԱՆ |
| **8–820–0071–11–11** | ԲԵԼԱՌՈՒՍ |
| **8–8000–805–805**<br>**2255** (GSM շարժական կապից) | ՂԱԶԱԽՍՏԱՆ |
| **0–800–303–000** | ՈՒԿՐԱԻՆԱ |
| **00–800–0071–0005**<br>(միայն ստացիոնար հեռախոսների համար) | ՄՈԼԴՈՎԱ |
| **0–800–805–8050** | ՂՐՂԶՍՏԱՆ |
| **+374 60 700333** | Հայաստան |

LG հաճախորդների սպասարկման ծառայություն: